

## «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

### ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ 15.10.2022Թ.-ԻՑ - 20.10.2022Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը տեղի է ունեցել առանց բաժնետերերի ֆիզիկական ներկայության՝ քվեաթերթիկներով (ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով) քվեարկելու միջոցով:

Ժողովին գրանցվելը և քվեարկությունը հասանելի են եղել 2022 թվականի հոկտեմբերի 15-ի ժամը 09:00-ից սկսած մինչև հոկտեմբերի 20-ի ժամը 18:00-ն:

Համաձայն Բանկի խորհրդի 07/09/2022թ.-ի թիվ 139-2.2 որոշման՝ ԱԿԲԱ բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք են ունեցել բոլոր այն բաժնետերերը, անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից, ովքեր 2022 թվականի սեպտեմբերի 28-ի ժամը 17:00-ի դրությամբ ընդգրկված են եղել Բանկի բաժնետերերի ռեեստրում և ունեցել են բաժնետոմսերի անձնական հաշիվներ:

Այդպիսի բաժնետերերի քանակը կազմել է 5,501 անձ:

Բանկի կողմից տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմել է 5,500,000 հատ բաժնետոմս (100%):

Համաձայն Բանկի Հաշվիչ հանձնաժողովի 25/10/2022թ.-ի թիվ 2 արձանագրության՝ ամփոփ տվյալներով 2022 թվականի հոկտեմբերի 15-ից 20-ը անցկացված բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու համար գրանցվել և քվեարկությանը մասնակցել են ընդհանուր 4,617,482 (չորս միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր ութսուներկու) հատ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերը, որը կազմում է ընդհանուր քվեարկող բաժնետոմսերի 84%-ը (ութսունչորս տոկոսը):

Ըստ այդմ, Բանկի 2022 թվականի հոկտեմբերի 15-ից 20-ը անցկացված բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովն իրավասու էր (Քվորումն առկա էր):

#### Ընդհանուր ժողովի նախագահ՝

Ռաֆայել Սարգսյան

#### Ընդհանուր ժողովի քարտուղար՝

Նարեկ Անտոնյան

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԸ

**Հարց 1-ին.** Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին հաստատելու մասին:

**ՀԱՐՑ 1-ԻՆ.****Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին հաստատելու մասին:****ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22-1**

Բանկի 2022, 2023 և 2024 թվականների տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնելու նպատակով որպես արտաքին աուդիտ իրականացնող անձ հաստատել «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՌԻՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ին:

*Քվեարկության արդյունքները.*

<b>Կողմ՝</b>	4,616,441 բաժնետոմս (99.977%)
<b>Դեմ՝</b>	25 բաժնետոմս (0,001%)
<b>Ձեռնպահ՝</b>	1,016 բաժնետոմս (0.022%)

**Որոշումն ընդունվեց:****ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑԻՆ ԵՎ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ****Ռաֆայել Սարգսյանը - ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ****Նարեկ Անտոնյանը - ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի 2022 թվականի հոկտեմբերի 15-ից 20-ի արտահերթ ընդհանուր ժողովի սույն արձանագրությունը կազմվել է 2022 թվականի հոկտեմբերի 25-ին, հայերեն և անգլերեն լեզուներով, 1 բնօրինակից և բաղկացած է 5 էջից: Արձանագրությունը պահվում է Բանկում: